

19 MAR 2013

29 JUL 2010

№ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 2

Բ. Ս. ԳԻՆՋՐՈՒՐԳ

պ.

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1007
34003

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՄՍՍԿՎԱ

1926

616-053.2

9-59

ՄՐՈՏ ԵՄԼ Ե 5
5241

Напечатано в типографии Госиздата
„Красный Пролетарий“. Москва,
Пименовская ул., д. № 16,
в количестве 4000 экз.
Главлит № 49950

Ի՞նչ է վարակիչ հիվանդությունը.

Յերբ մենք ուշի ուշով դիտում յենք մարդու հիվանդությունները, տեսնում յենք, վոր մի քանի հիվանդություններ շատ արագ են տարածվում ամբողջ բնակչության մեջ: Մեկ ել տեսար, մեկ հիվանդից հետո մի ուրիշն է նույն հիվանդությունով հիվանդանում, և ապա՝ յերրորդը, չորրորդը և այլն: Մի և նույն հիվանդությունը շուտով հարեաններին է անցնում և կարճ միջոցում այն տեղ, ուր միայն մի դեպք կար, արդեն բազմաթիվ այդպիսի հիվանդներ կան:

Յերբեմն ել պատահում է, վոր շատ տարիներ մարդ մի հիվանդությունով է տառապում: Բայց այդ հիվանդությունը բնավ ուրիշներին չէ անցնում, մինչև անգամ ամենամոտ մարդկանց, վորոնք հիվանդին շրջապատում են:

Բանից դուրս է գալիս, վոր մի քանի հիվանդություններ մեկից մյուսին չեն անցնում, իսկ մի քանիսները հիվանդից անցնում են, «կպչում են» առողջ մարդուն: Եւ ահա այդ կպչող հիվանդությունները վարակիչ են կոչվում: Մնացյալ հիվանդություններից վարակիչները ավելի

հաճախ եւ վստակաւոր եւ յիևում: Կարճ ժամանակամիջոցում նրանք տարածվում են ընակչութեան մեջ և քիչ մարդ չեն գերեզման տանում:

Վերցրեք թեկուզ թոքախտ վարակիչ հիվանդութիւնը, ամբողջ մարդկութեան մեկ յոթերորդ մասը նրանից ե կորչում: Բայց քանի միլիոն մարդ ե մեռնում խոլերայից, տիֆերից, ջերմից և սիֆիլիսից: Վերջապես յերեխաներին վերցրեք: Չե վոր յերեխաների վարակիչ հիվանդութիւնները, որինակի համար, գիֆտերիտը (բկացավը), սկարլատինան, կարմրուկը և ուրիշները մեր յերեխաներին անողոք հնձում են, մանավանդ գլուղերում: Դեռ ևս պատերազմից առաջ միայն Ռուսաստանում տարեկան ավելի քան 12 միլիոն մարդ ավելի եյին հիվանդանում վարակիչ հիվանդութիւններով: Այդ հիվանդների մեծ մասը գլուղերի վրա եր ընկնում: Վերջին տասը տարվայ ընթացքում—համաշխարհային պատերազմի, յեղափոխութեան և քաղաքացիական կռիւ ժամանակ վարակիչ հիվանդութիւններն ավելի ևս սաստկացան: Այդ տարիների ընթացքում միայն բժավոր և վերադարձ տիֆից 12 միլիոն մարդուց ավելի յե հիվանդացել: Դուք տեսնում եք, թե վարակիչ հիվանդութիւնները վորքան վտանգավոր են և ժողովուրդը նրանից

վորքան շատ ե վստակում: Այդ չարիքի դեմ խիստ կռիւ պետք ե մղել, վորովհետեւ անժամանակ նա մի քանի միլիոն մարդ ե ամեն տարի գերեզման տանում: Բայց այդ յերդվյալ թշնամուն հաղթելու համար, վարակիչ հիվանդութիւնները ընաշինջ անելու համար պետք ե իմանալ, թե ինչ տեղից են այդ հիվանդութիւնները ստացվում, ինչպես են նրանք մի մարդուց մյուսին անցնում և ինչով կարելի յե նրանց վոչնչացնել:

Վարակիչ հիվանդութիւնների պատճառները:

Յերկար ժամանակ անհայտ եյին այնպիսի կենդանիներ ու բույսեր, վորոնց մարդ բոլորովին չի տեսնում, չի նկատում: Նրանք այնքան մանր են, վոր միայն մանրադիտակի (խոշորացույցի) ոգնութեամբ (դա մի գործիք ե, վոր մի քանի մեծացնող ապակիներ ունի) կարելի յե նրանց տեսնել:

Յեթե մանրադիտակով նայելու լինինք մի վորեւե, ասենք, թոզ, վոր աչքի համար անտեսանելի յե, նա հազար, գուցե և յերկու հազար անգամ իր իսկական մեծութիւնից խոշոր կլինի. յեթե մանրադիտակով նայենք ճահճի մի կաթիլ ջուրը, ապա նրա մեջ կարելի յե բազմաթիւ կենդանի եյակներ նկատել:

Բանից դուրս ե գալիս, վոր բնության մեջ ամենուրեք—և ողի, և ջրի, և հողի մեջ, բացի տեսանելի կենդանի եյակներից, անթիվ ու անհամար այնպիսի եյակներ կան, վորոնց հասարակ աչքով մենք չենք կարողանում տեսնել: Բայց խոշորացույցի միջոցով մենք ամեն տեղ կարող ենք նրանց գտնել: Այդ ամենափոքրիկ կենդանի եյակները մանրեներ (միկրոբներ և բակտերիաներ) են կոչվում: Մի փոքրիկ կաթիլի մեջ նրանք մի քանի միլլիոն կարող են լինել: Մանրեներն ունին իրենց առանձին կյանքը, մնվում են, մեծանում, բազմանում և մեռնում: Նրանք շատ արագ են բազմանում. մի որում մի մանրեյից ահագին քանակութուն կարող ե աճել:

Յուրաքանչյուր մանրե իր ձևն ունի:

Նրանցից մի քանիսներն անդադար շարժվում են, մյուսներն անշարժ են թվում: Մանրեների մի տեսակը ջրի մեջ ե ապրում, մյուսները—աղբի կույտերում, հողում, կենդանիների զիակներում, կենդանի անասունների և կենդանի բույսերի մեջ: Մանրեները առանձնապես շատ են ողի մեջ՝ բնական տեղերի մոտ: Մանրեների մեծ մասը արեգակից վախենում են. լավ են ապրում, բազմանում այնտեղ, ուր արև քիչ կա կամ բոլորովին չկա:

Այդ մանրեներից շատերը բոլորովին անվնաս են մարդու համար: Շատերն ել մարդուն ահագին ոգուտ են տալիս: Այդպիսի մանրեներից մի քանիսները սատկած անասունների զիակներ և բույսեր են փթեցնում, և դրա շնորհիվ հողը պարարտանում ե: Այդպես ել՝ հացի թթվելը, գարեջրի և գինու յեռ գալը առանց մանրեների լինել չի կարող: Բացի ոգտակար մանրեներից բնության մեջ շատ կան այնպիսիները, վորոնք ահագին չարիք են հասցնում մարդուն: Այդ վնասակար մանրեները բերանի, թոքերի, կաշու քերծվածքի միջոցով մարդու մարմինն են մտնում և սկսում այնտեղ արագ արագ բազմանալ: Առաջ, յերբ մանրեների մասին մարդիկ գաղափար չունեյին, հավատում եյին, վոր վարակիչ, տարափոխիկ հիվանդությունը քամին ե բերում, վոր այդ հիվանդություններն «աստծու պատիժն» են: Այդ հիվանդությունները նրանք «քամի» եյին անվանում: Այժմ արդեն հայտնի յե, վոր ամեն տեղ տարածված այդ հիվանդությունները վնասակար մանրեներից են առաջ գալին, վորոնք մեր մարմնի մեջ են ընկնում: Մարդու մարմնում այդ մանրեները նրա հյութով են կերակրվում, իսկ իրենց արտադրած վնասակար հյութերով նրան թունավորում են և պեսպես հիվանդություններ առաջ բերում: Այդ

վասակար մանրենները՝ մի մարդուց մյուսին անցնելով, մի անգամից շատ մարդ են հիվանդացնում մի և նույն հիվանդությունով: Ահա թե ինչու այդ մանրենները «վարակիյ ախս» են կոչվում, իսկ նրանց առաջ բերած հիվանդությունները վարակիյ, տարափոխիկ կամ կպյոյ են կոչվում: Ամեն մի տարափոխիկ հիվանդություն իր մանրեն ունի, իր «վարակիյ ախտը», վորոնք միմյանցից վո՛չ միայն իրենց ձևով են տարբերվում:

Այսպես, կան մանրեններ, վորոնք կարող են ապրել և բազմանալ միայն թոքերում, որինակի համար, թոքերի բորբոքման ժամանակ (մարդու կուրծքը ցավում է, նա հագում է), իսկ ուրիշ մանրեններ աղիքներում են ապրում (խորեբա, վորովայնի տիֆ): Դիֆտերիտի ժամանակ այն մանրենները, վոր առաջ են բերում այդ հիվանդությունը, գլխավորապես հիվանդի բերանումն են ապրում: Մանրենների մեծ մասը առանձնապես լավ է աճում և բազմանում այնտեղ, ուր շատ կեղտ, աղտեղություն կա, ուր արևը հազիվ է ընկնում—նրանցից մի քանիսները ապրում են ջրի մեջ, հոտած հեղուկներում, նեխվող կույտերում և դեն գցած տականքներում:

Ինչպես են վարակիյ հիվանդությունները մեկից մյուսին անցնում:

Հիվանդ մարդու մարմնից վարակիյ ախտը արտաթորության, թքի և մեզի (շեռի) միջոցով է դուրս գալիս: Այնպիսի վարակիյ հիվանդություններ կան, վորոնցով մարդ թեև ամբողջապես տկար է, բայց առանձնապես տանջվում է նրա մարմնի մի վորոյեղէ մասը: Այդ տեսակ հիվանդի հենց այդ տեղից էլ «վարակիյ ախտն» է դուրս գալիս: Որինակի համար, յեթե մարդ ծաղիկ է հանում, վարակիյ ախտը մորթի թեփի կտորների և թարախի մեջ է լինում: Կապույտ հագով (կոքլյուշ) հիվանդ յերեխան հազալիս թանձր լորձուկնք է թքում: Կապույտ հագի վարակիյ ախտն այդ լորձուկնքի մեջ է լինում: Վորովայնի տիֆի ժամանակ վարակիյ ախտը արտաթորության մեջ է լինում: Խորեբայով հիվանդի վարակիյ ախտը վոչ միայն հեղուկ արտաթորության (լուծ), այլ և փսխածի մեջ է լինում: Այսպես ուրեմն դուք տեսնում եք, վոր տարափոխիկ հիվանդություն ունեցողը «վարակիյ ախտ» է տարածում իր շուրջը: Այդ ախտով է ծրծվում հիվանդի անկողինը (ուր նա պառկած է), նրա հագուստը: Ախտը նույնպես հատակի, սեղանի վրա և այն ամանի մեջ է ընկնում, որից

հիվանդը կերակուր ե ընդունում: Մանրենների վարակիչ ախտը մանսավանդ շատ ե լինում հատակի ձեղքերում: Յերբ ախտը չորանում ե, նա հատակից բարձրանում ե ե թոզի հետ ողի մեջ ե լինում: Վարակիչ մանրենները կաշում են այն մարդու ձեռներին ե հագուստին, վորը հիվանդին խնամում ե: Ահա քե ինչոռ այն Վարդիկ, փորոնի հիվանդի հետ միասին մի սեկյակում են, շատ հաճախ նույն հիվանդությունով են հիվանդանում, ինչպես ասում են՝ «վարակվում են»: Մանկական վարակիչ հիվանդությունները ժամանակ՝ սկարլատինայի, կարմրուկի, կապույտ հազի ժամանակ վարակիչ ախտը մնում ե այն բոլոր իրերի վրա, վորոնց հետ հիվանդը շփվում ե—խաղալիքների, մրգերի, սպիտակեղենի, ամանի վրա, նույնպես ե նրան շրջապատող մարդկանց ձեռքերի, մազերի ե շորերի վրա: Դիֆտերիտի (բկացավ), թոքախտի ե ինֆլուենցայի ժամանակ վարակիչ ախտը ողի միջոցով ե փոխվում, նա ընկնում ե այն ժամանակ, յերբ հիվանդը հագում ե կամ փոշտում, նույնպես ե այն ժամանակ, յերբ հիվանդը խուխը (բլզամը) առանձին առանձի մեջ յե քոռն, այլ հատակի վրա, վորտեղից նա, ինչպես արդեն ասացինք, թոզի հետ վեր ե բարձրանում: Արյունախոռն փորլուծության, խոլերայի ե վորովայնի

տիֆի ժամանակ վարակիչ ախտերը արտաթորության հետ միասին են դուրս գալիս: Ճանձերը այդ վարակիչ մանրենները շատ հեռու են տանում, տարածում: Նրանց վոսները ե կնճիթների վրա նրանք միշտ կան: Այդ վարակիչ ախտը կաշում ե ճանձերին այն ժամանակ, յերբ նրանք հիվանդի կամ նրա արտաթորության վրա յեն նստում: Մարդու համար առանձնապես վտանգավոր ե, յերբ ուտելեղենների միջոցով են ճանձերը վարակիչ ախտը մարդուն տալիս: Ճանձերը բազմաձևունդ են: Գիտնականների հաշվով մի եդ ճանձ մի տարում մինչև վեց հազար միլլիարդ ժառանգ կարող ե ունենալ:

Բայց ճանձերը միայն իրենց թաթիկներով ե փոքրիկ կնճիթով չեն տարածում վարակիչ ախտը, այլ ամեն տեսակ դեն գցած տականքներ ե հիվանդից դուրս յեկած ուրիշ բաներ են կուլ տալիս (բարակացավով հիվանդների խուխը ե բլզամը, տիֆով ե խոլերայով հիվանդների կղկղանքը): Նրանք այդ վարակիչ ախտերը իրենց արտաթորություններով են դուրս թողնում: Այժմ արդեն հայտնի յե, վոր ճանձերը վոչ միայն խոլերայի, տիֆի ե թոքախտի վարակիչ ախտերն են տարածում, այլ ե ժանտախտի (չոճամ), արյունախոռն փորլուծության, շարավոտ հիվանդությունների, դիֆտերիտի, կայծախ-

տի (սիրբիրական ախտի) և շատ ուրիշ հիվանդություններինը:

Բացի ճանճերից, բաղլինջները, լվերը և վոջիլները նույնպես տարածում են վարակիչ ախտեր:

Բաղլինջները սկարլատինայի, ծաղկի և բարակացավի (թոքախտի, տուբերկուլոզի) վարակիչ ախտերն են տարածում:

Լվերը ժանտախտի, ծաղկի և բորոտության վարակիչ ախտերն են տարածում:

Իսկ վոջիլները տարածում են ամենքին քաջ հայտնի բծավոր և վերադարձ տիֆի հիվանդությունները:

Վարակիչ հիվանդությունները շատ հաճախ կրոնական սովորությունների և ծեսերի շնորհիվ են փոխվում, մանավանդ խաչերն ու պատկերները համբուրելու և հաղորդության միջոցով:

Ննջեցյալի մոտ յերբեմն համարյա թե ամբողջ գլուղն է հավաքվում, ել չեն նալում, վարակիչ թե վոչ վարակիչ հիվանդությունից է նա մեռել: Հիշատակը հարգողները միշտ կարող են վարակվել հենց նրա տանը, ուր քիչ առաջ վարակիչ հիվանդն էր:

Այդ վարակիչ ախտը կարող է նրանց կպչել և հիվանդի մոտ յեղած իրերից:

Շատ հաճախ է պատահում յեկեղեցիներում,

վոր քահանան իր անլվա մատով կամ միկենույն գդալով մինչև հազար մարդ է հաղորդում:

Յեւ յեթե հաղորդվողների միջև թեկուզ մեկ վարակված հիվանդ գտնվի (և անպատճառ կգտնվի), ապա այդ գդալի միջոցով վարակիչ ախտը շատ հեշտ կարող է մյուսներին անցնել:

Հավասարապես վարակիչ հիվանդությունը կարելի յե ստանալ յեկեղեցում պատկերները համբուրելիս, կամ թե յերբ աղոթողները հոգեվորականների ձեռն են համբուրում: Ձե վոր այդպիսի դեպքերում մի և նույն տեղը հարյուրավոր, թերևս և հազարավոր մարդիկ են համբուրում: Բավական է, վոր մի վարակված հիվանդ համբուրի այդ տեղը՝ քահանայի ձեռք լինի թե սուրբի պատկեր, վարակիչ է դառնում, և այդ համբուրողից հետո հետևյալ աղոթողները համբուրելիս միշտ կարող են վարակվել:

Վարակիչ հիվանդություններից մեռած մարդկանց դիակները վրա վարակիչ ախտը յերկար ժամանակ է պահպանվում: Ննջեցյալին վերջին հրաժեշտի համբուլը տալիս շատ հեշտ կարելի յե վարակվել:

Ձեզանից յուրաքանչյուրը կատարելի համատարած վարակիչ հիվանդության դեպքեր և, հավանական է, նկատած կլինի, վոր ամենից վարակիչ հիվանդություններն ամենից առաջ այն

մարդկանց միջև են յերևան գալիս, վորոնք խոնավ, մուժթ բնակարանում են ապրում, ուր լույս կիչ կա, ճանճ—շատ: Այդ հիվանդություններով ավելի շուտ հիվանդանում են նրանք, վորոնք վատ են ուտում, անմաքուր ջուր են խմում և վորոնց յերեխաները կեղտոտ և փնթի են պահվում:

Այդպիսի մարդկանց մոտ մանրեները շատ լավ են ապրում և պեսպես վարակիչ հիվանդություններով ամենից առաջ նրանց են վարձատրում — վարակում: Մեզանում գյուղացիները անասունների և թռչունների հետ մի հարկի տակ են ապրում. վերջիններս սաստիկ կեղտոտում են ոզը և ապականում: Յեթե այդպիսի խրճիթ վարակիչ մանրեներ ընկնեն, նրանք շատ արագ կսկսեն բազմանալ, և այդ խրճիթում գրեթե բոլոր կեցողներին կարող են հիվանդացնել: Հագիվ ե պատահում, վոր մեկը չհիվանդանա: Միայն նրանք են առողջ մնում, վորոնց արյան մեջ այդ հիվանդությունից նրանց պաշտպանող նյութեր կան:

Այդպիսի մարդիկ, յերևի, այդ նյութերը ծնվելիս են ժառանգություն ստանում իրենց ծնողներից:

Մարդու մարմնի մեջ բնկած մանրեներին ժամանակ ե հարկավոր այնտեղ բազմանալու յեվ ուժեղանալու համար:

Վարակիչ հիվանդությունը յերբ մարդուն կպչում ե, նույն ժամին կամ նույն ուրը նրան

չի պառկեցնում: Վորոշ ժամանակ ե անցնում, մինչև վոր այդ մանրեներն այնքան են ուժեղանում, վոր մարդ նրանցից տանջվել ե սկսում:

Այն ժամանակը, յերբ մանրեները մարդու մարմնի մեջ են ընկնում, հիվանդության գաղտնի ժամանակ ե կոչվում: Յուրաքանչյուր վարակիչ հիվանդության համար այդ ժամանակը զանազան ե: Այսպես, որինակի համար, յեթե յերեխան սկարլատինայով վարակվի, նա իսկույն և յեթ չի հիվանդանում՝ յերբ մանրեները նրա ներսն են մըտնում, այլ դրանից հետո 7—8 ուր անցած: Կարմրուկով հիվանդ յերեխայի հետ խաղացող յերեխան այդ իսկ ուրը չի հիվանդանալ, այլ $1\frac{1}{3}$ կամ 2 շաբաթից հետո: Ծաղկով հիվանդից վարակվելով՝ դու միայն 13—15 ուրից հետո ծաղկով կհիվանդանաս: Բայց բկացավի (գիֆտերիտի) վարակիչ ախտը յերեխայի մարմնում շատ արագ ե բազմանում, և վարակվելուց 2—3 ուրից հետո նա դրանով հիվանդանում ե:

Մարդու կազմվածքը կովում ե վարակիչ ախտի դեմ:

Մանրեները արագ բազմանալով, աշխատում են մարդուն թունավորել իրենց թուլանով: Բայց այդ իսկ ժամանակ հիվանդի արյան մեջ միջոցներ են մշակվում այնտեղ ընկած վարակիչ ախտը վոչնչացնելու համար: Կյանքի և

մահվան կռիվ է տեղի ունենում: Ով ում կհաղթի, Յեթե վարակիչ ախտն է հաղթող հանդիսանում, մարդ կորչում է: Յեթե կազմվածքը կարողանում է արյան մեջ բավականաչափ պաշտպանողական միջոցներ ստեղծել, ապա նրան հաջողվում է վարակիչ ախտին հաղթել, և մարդը սկսում է կազդուրվել:

Մարդու կազմվածքի հիվանդության միջոցին ստեղծված պաշտպանող նյութերը դեռ յերկար ժամանակ մնում են նրա արյան մեջ: Բժավոր տիֆի, կարմրուկի, սկարլատինայի, ծաղկի հիվանդություններից պաշտպանող նյութերը մարդու ամբողջ կյանքի ընթացքում մնում են արյան մեջ: Ահա այդ է պատճառը, վոր այդ հիվանդությունները տարած մարդը այլ ևս յերբեք նրանցով չի հիվանդանում: Իսկ ուրիշ հիվանդությունների ժամանակ (վորովայնի տիֆ, փորահարինք, բկացավ) պաշտպանող նյութերը արյան մեջ շատ շուտ անհետանում են, և առողջանալուց հետո քիչ ժամանակ անցած մարդ կարող է նորից հիվանդանալ այդ հիվանդություններով:

Հիվանդությունը անցնելուց հետո վարակիչ ախտն վորհան ժամանակ է մնում մարդու մարմնի մեջ:

Պետք է հիշել, վոր վարակիչ ախտը, նույն իսկ լիովին առողջանալուց հետո, միանգամից

չի գուրս գալիս մարդու մարմնից: Մարդ առողջ է, բայց ուրիշների համար նա դեռ ևս վարակիչ է, վորովհետև առողջանալուց հետո մի առ ժամանակ վարակիչ ախտը մնում է նրա մեջ: Այդ ժամանակը յուրաքանչյուր վարակիչ հիվանդության համար տարբեր է: Այսպես, որինակի համար, սկարլատինայով հիվանդի վարակիչ ախտը տևում է 5—6 շաբաթ, հաշվելով հիվանդության սկզբից: Կարմրուկով հիվանդացած յերեխայի վարակիչ ախտը կորչում է՝ բժերը երևալուց 4 շաբաթ հետո: Ծաղկով հիվանդի վարակիչ ախտը կորչում է և շրջապատողների համար անվտանգ դառնում՝ միայն կեղևը (թեփուկը) բուրբուկին ընկնելուց հետո: Դա լինում է 3 շաբաթից, իսկ յերբեմն 1½ ամսից հետո:

1007
3403

Մանկական վարակիչ հիվանդություններ.

Վարակիչ հիվանդությունների մեծ մասը հավասարապես վարակում է թե տղամարդկանց, թե կանանց և թե յերեխաներին: Բայց ահա նրանցից մի քանիսները, որինակի համար, կարմրուկը, սկարլատինան, կապույտ հազը և ուրիշները, միայն յերեխաներն են ունենում—մեծերը դրանցով հազիվ են հիվանդանում:

Ամենքին յայտնի յէ, թե մանկական վարակիչ հիվանդությունները վորքան անախորժու-

թյուն, վիշտ և արցունք են պատճառում ընտանիքին: Մեզանում ամեն տարի մեծ քանակութեամբ յերեխաներ են մեռնում վարակիչ հիվանդութիւններէց, իսկ ավելի մեծ թիվ՝ ընդմիշտ հաշմանդամ և մնում: Այդպիսի յերեխաները հիվանդութիւնից հետո շատ հաճախ ծանր հետևանքներ են ունենում (խլութիւն, կուրութիւն): Ահա թե ինչու յուրաքանչյուրի համար շատ կարևոր է իմանալ, թե յերեխաները ինչու յեն հիվանդանում վարակիչ հիվանդութիւններով, ինչպէս են այդ հիվանդութիւնները նրանց միջև մեկից մյուսին անցնում և թե ինչպէս կարելի յէ այդ հիվանդութիւնների առաջը միանգամայն կտրել: Մինչև կես տարեկան հասակը մանուկները հազիվ են վարակիչ հիվանդութիւնով հիվանդանում, որովհետև մօր կաթը այդպիսի հիվանդութիւններից նրան պաշտպանում է: Յերկրորդ կիսամյակում յերեխան ամեն ժամանակ կարող է վարակվել: Կամ մեկը պատահաբար իր հագուստով, կեղտոտ ձեռներով կամ հիվանդ երեխայի ձեռքին յեղած խաղալիքներով վարակիչ ախտը տուն կբերի: Կամ յերեխան մի այնպիսի տուն կգնա, ուր տարափոխիկ հիվանդութիւն կա: Բավական է, վոր գոնե մի վարակված յերեխա գա, իսկույն այդ հիվանդութիւնը բոլոր յերեխաների միջև տարածվում է:

Յերեխաները շատ հեշտ են միմյանց վարակում տարափոխիկ հիվանդութիւններով, ձեռքերով, մատիտներով խաղալով, փոխանակելով դրամ և ուրիշ իրեր, վորոնք հիվանդացածի ձեռին են յեղել: Շատ անգամ մանկական տարափոխիկ հիվանդութիւնները նախադարձական յերեխաների միջև են սկսվում: Յերբեմն պատահում է, վոր ամբողջ ձմեռը այդ հիվանդութիւնները դպրոցից չեն հեռանում: Այդպիսի դեպքերում վոչ միայն բոլոր աշակերտները կհիվանդանան, այլ և նրանցից յուրաքանչյուրն անպատճառ այդ վարակիչ ախտը տուն կտանի: Իսկ այնտեղ մնացյալ յերեխաներն են սկսում հիվանդանալ: Ամենից հաճախ այն յերեխան է վարակիչ ախտը դպրոց բերում, վորի տանը յերեխաներն այդ հիվանդութիւնն ունեն: Այդպիսի յերեխային մայրը դպրոց է ուղարկում, չհասկանալով, վոր մինչև անգամ առողջ, բայց վարակվածների հետ շփված յերեխաներին ուրիշ յերեխաների մօտ թողնել չի կարելի—վոչ ուրիշի տունը, վոչ դպրոց, վոչ մանկական պարտեզ, վոչ էլ մտուր:

Վարակիչ ախտը դպրոց կարող են բերել նաև այն յերեխաները, վորոնք մի վորևէ հիվանդութիւնով հիվանդ են յեղել: Այդ այն ժամանակ է պատահում, յերբ վարակիչ հիվանդութիւնով հիվանդ յեղած յերեխային շատ շուտ են դպրոց

ուղարկում: Չե՞ վոր վարակիչ ախտն այդպիսի
 յերեխայի մեջ մի վորոշ ժամանակ դեռևս մնում
 է: Այդպիսի յերեխաները շատ հեշտ կարող են
 դպրոցում վարակել մնացյալ յերեխաներին:

Ամենից յաճախ յերեխաները կարմրուկով
 են հիվանդանում, բկացավով (դիֆտերիտով),
 կապոյտ հազով և ուրիշ հիվանդություններով:
 Մի քանիսնեքի մասին յես ավելի մանրամասնու-
 րեն կպատմեմ:

Կարմրուկ.

Ժողովուրդը կարծում է, թե ամեն մի յերե-
 խա կարմրուկով անպատճառ պիտի հիվանդանա:
 Շատերը կարմրուկը բուրրովին չնչին հիվանդու-
 թյուն են համարում: Իա ճիշտ չէ: Կարմրուկից
 քիչ չեն մեռնում: Կարմրուկով զանազան հասակի
 յերեխաներ են հիվանդանում, բայց նա առանձ-
 նապես վտանգավոր է մինչև 2 տարեկան յերե-
 խաների համար:

Յերեխայի վրա այդ հիվանդությունը մի
 անգամից չի յերևում: Նա տաքացնում է, գլուխն
 է ցավում, հարբուխ ունի: Յերեխան այլևս չի
 խաղում ուրիշների հետ, մեծ մասամբ պառկած
 է, աչքերը կարմրում են, սկսում է հազալ: Յեր-
 կու ուրից հետո յերեսը կարմիր դուրս է տալիս,

իսկ ևս յերկու ուր անց՝ ամբողջ մարմինն է դուրս
 տալիս: Դուրս տված այդ մանր բշտիկները յեր-
 կար չեն մնում— 2—3 որ: Տաքությունն անց-
 նում է, և յերեխայի մարմինը սկսում է թեփով
 ծածկվել: Կարմրուկից հետո յերեխան կարող է
 ծանր հետևանքներ ունենալ: Յերբեմն ականջնե-
 րից հոսում է: Իսկ շատ հաճախ թոքերի բորբո-
 քում է սկսվում: Շատ դեպքում կարմրուկից
 հետո յերեխաները սկսում են թոքերի տուբեր-
 կուլոզ (թոքախտ, բարակացավ) կամ ամբողջ մար-
 մնի տուբերկուլոզ ստանալ: Կարմրուկից հետո
 յերեխաները ամենից շատ այդ հիվանդությունից
 են մեռնում: Ողի միջոցով վարակիչ ախտը հիվանդ
 յերեխա ից հեշտությամբ առողջին է անցնում:
 Շորտի յեղ յորտի վրա նա յերկար յի մնում:
 Կարմրուկը շատ տարափոխիկ և կպչոզ հիվան-
 դություն է: Յեթե մի տուն կարմրուկ է ընկ-
 նում, այդ ընտանիքի յերեխաները արդեն կհի-
 վանդանան, յեթե կարմրուկով հիվանդացածին
 իսկույն հիվանդանոց չուղարկեն:

Յերեխան այդ ցավով հիվանդ է լինում մո-
 տավորապես 4 շաբաթ՝ հաշվելով վարակիչ ախտը
 ընկնելու սկզբից մինչև թեփի վերջանալը:

Յերեխան միայն այն ժամանակ է ուրիշներին
 համար անվարակիչ դառնում, յերբ նրա մարմնի
 վրա այլևս կեղև (թեփ) չի լինում: Յերեխան

իր կյանքում կարմրուկով միայն մի անգամ ե հիվանդանում:

Սովորող յերեխային կարելի չէ դպրոց թողնել կատարելապես առողջանալուց հետո, բայց վոչ շուտ, քան դուրս տալուց (կարմրուկը) 21—28 ուր հետո:

Ս կ ա բ լ ա ս ի ն ա.

Յերեխայի համար այդ հիվանդութիւնը շատ վտանգավոր ե: Նրանից շատերը մեռնում են: Յերեխաներից վոմանք սկարլատինայից հետո ունենում են շատ ծանր հետեանքներ, վորոնք մնում են ամբողջ կյանքի ընթացքում: Յերեխան հիվանդանում ե վարակիչ ախտը նրա մեջ մտնելուց յոթ-ութ ուրից հետո: Սկզբում տաքութիւն ե լինում, յերեխան գանգատվում ե, վոր կուլ տալու ժամանակ ցամ ե զգում. վորքրիկ յերեխաները հիվանդութիւն սկզբում յերբեմն ցնցումներ են ունենում: Հիվանդութիւն երկրորդ ուր յերեխայի մարմինը դուրս ե տալիս, վոր հետեյակ ուր անցնում ե յերեսը: Բշտիկները յոթն ուր են լինում: Սկարլատինայից հետո յերեխան յերբեմն ծանր հետեանքներ ե ունենում: Յաճախ յերիկամունքի բորբոքումն ե սկսվում—յերեսը, վորտներն ու վորը ուռչում են (ջրգողութիւն): Կամ թե յերեխայի ալանջներից թարախ ե սկսում հոսել, և նա ամբողջ կյանքը կարող ե խուլ մնալ: Յեր-

բեմն ել այդ հիվանդութիւնից հետո յերեխայի վզին պալարներ են դուրս գալիս:

Յերբ վոր բշտիկները կորչում են, մի քանի ուրից հետո մորթը սկսում ե մեծ կտորներով պոկվել, մանավանդ այդ նկատելի յե ձեռքերի ափերում և վորտերի տակը, ուր նրանք ամբողջ շերտերով յեն ընկնում:

Վարակիչ ախտը յերկար ժամանակ ե մնում սեւեյակում յեյ հիվանդի մոտ յեղած իրերի վրա:

Յերեխայի սկարլատինան մի քանի շաբաթ ե տևում, և միայն հիվանդանալուց հետո 6 շաբաթ անցած նա անվարակիչ ե դառնում շրջապատողների համար: Յերեխան յերկրորդ անգամ համարյա թե յերբեք չի հիվանդանում:

Աշակերտին կարելի չէ դպրոց թողնել վոչ շուտ, քան հիվանդութիւն սկզբից 6 շաբաթ անցնելուց հետո: Բայց վոչ մի դեպքում, նոյնիսկ վերջնականապես առողջանալուց հետո, ուսումնարան չի կարելի ուղարկել, յեթե բնահարանը, շորերը և դասական պիտույքը (զբքերը, տետրակները) ախտահանութիւն (դեզինֆեկցիա) չեն յենթարկվել:

Դ ի Ֆ ս ե բ ի ս.

Դիֆտերիա վարակիչ հիվանդութիւնը յերեխանեզը ստանում են մանրեներից, վորոնք մեծ մասամբ նրա թքի մեջ և բերանում են լինում:

Վարակիչ ախտը ողի հետ միասին այնտեղ
ընկնելով սկսում է արագ բազմանալ և իր թույ-
նով յերեխային թունավորել: Այդ յերեխան
կարող է այդ վարակիչ ախտը ուղղակի մի ու-
րիչ հիվանդ յերեխայից ստանալ, որինսակի հա-
մար, հաւնութիւն միջոցով, կամ թե՛ դիֆտերի-
տով հիվանդ յերեխայի մոտ յեղած իրերից ոգ-
տովելիս: Բացի դրանից՝ դիֆտերիտի վարակիչ
ախտը կարող է բոլորովին առողջ մարդու բերա-
նում յերկար ժամանակ մնալ: Նրանից դա կա-
րող է ուրիշ յերեխաների անցնել և դիֆտերի-
տով ծանր հիվանդանալու պատճառ լինել: Յերբ
վարակիչ ախտը ընկնում է, յերկու որից հետո
յերեխան հիվանդանում է: Սկսվում է տաքու-
թյունից, յերեխան դանդատվում է գլխացավից,
կուլ տալը ցավ է պատճառում: Յերեխան որե-
ցոր վատանում է: Նա վոչ միայն դժվարանում
է կուլ տալ, այլ և ավելի ու ավելի դժվարու-
թյամբ է շունչ քաշում: Յերեխան խրխուում է, շըն-
չասպառ է լինում: Յեթե իր ժամանակին բժիշ-
կը ոգնության չգա, յերեխան կխեղդվի: Բկա-
ցավի ժամանակ յերբեմն պատահում է, վոր հի-
վանդի համար շնչառությունը դժվար չէ, բայց
վարակիչ ախտը այնքան թունավոր է լինում, վոր
շատ շուտ, համարյա թե յերկու որում, յերե-
խային սպանում է:

Բկացավով հիվանդացածները շատ հաճախ,
առողջանալուց հետո, ծանր հետևանքներ են
ստանում: Սիրտն է հիվանդանում, կամ աչքերն
են սկսում փչանալ, կամ թե վոտը կամ ձեռը
այլևս չեն աշխատում: Դիֆտերիտով հիվանդա-
ցածը դեռևս յերկար ժամանակ առողջանալուց
հետո ուրիշ յերեխաների համար վարակիչ է
մնում:

Դիֆտերիտով հիվանդին գրեթե միշտ կարելի
յե ազատել և լիովին առողջացնել: Դրա համար
հարկավոր է նրան առանց ուշացնելու հիվան-
դանոց ուղարկել: Այնտեղ նրան կներսրսկեն
դեղ՝ դիֆտերիտի դեմ, և յերեխան կսկսի առող-
ջանալ: Վորքան շուտ յերեխայի մեջ սրսկեն այդ
դեղը, այնքան հաստատ կարելի յե փրկել նրան
հավաստի մահից: Հակադիֆտերիտյան դեղը
ստացվում է դիֆտերիտով հիվանդ յեղած ձիյու-
արյունից: Սյդալիսի ձիյու արյան մեջ հիվանդու-
թյան ժամանակ պաշտպանող նյութեր են գոյա-
նում, վորոնք սպանում են դիֆտերիտի վարա-
կիչ ախտը: Յերբ մենք յերեխայի կաշու տակ
հակադիֆտերիտի դեղից սրսկում ենք, դրանով
մենք նրան պաշտպանող նյութեր յենք տալիս,
վորոնք ոգնում են նրան զիմադրել դիֆտերիտի
վարակիչ ախտին, վոր նրա մարմնի մեջ է ընկել:

Կապուլյոս հազ (կոկլլոնո)

Այդ հիվանդութիւնը ձեզ ամենքիդ ծանօթ պիտի լինի: Անշուշտ ամենքը լսած կլինեն, թե կապուլյոս հազով հիվանդ յերեխաները հազից տրաքվում են: Հազացող յերեխային նայելիս թվում է թե անա նա կխեղդվի: Այդ հիվանդութիւնը մի քանի շաբաթվա, մինչև անգամ ամիսների ընթացքում վերջնականապես ուժասպառ է անում յերեխային: Այդպիսի հիվանդների վարակիչ ախտը թքի և բլդամի մեջ է: Հազի ժամանակ այդ հիվանդների թուրքը առատորեն դես ու դեն է ցայտում, և այդպիսով վարակիչ ախտը չորս կողմը տարածվում: Կապուլյոս հազի վարակիչ ախտը շատ կպչող է: Բավական է, վոր յերեխան լինի մի տան մեջ, ուր կապուլյոս հազով հիվանդ յերեխա կա, նա արդեն անշուշտ կհիվանդանա: Հիվանդացած յերեխայի մայրը նկատում է, վոր նա թեթև տաքութիւն և հարբուխ ունի: Յերեխան հազալ է սկսում: Մի քանի օրից հետո տաքութիւնը իջնում է, իսկ հազը ավելի ու ավելի յե սաստկանում: Իսկական կապուլյոս հազի «ցնցողական հազն» է սկսվում: Ով վոր մի անգամ այդ հազը լսել է, նա միշտ կճանաչի: Յերեխայի ցնցողական հազը ընդամիջումներով է վրա տալիս. որա-

կան տասից մինչև յերեսուն անգամ: Այդ հազը վեց շաբաթից պակաս չէ շարունակվում: Յետո սաստիկ հազը հետզհետե պակասում է, և յերեխան սկսում է լավանալ: Շատ անգամ կապուլյոս հազի ժամանակ թոքերի բորբոքումն է սկսվում, վորից հաճախ յերեխան մեռնում է: Յերեխաները կյանքում կապուլյոս հազով մի անգամ են հիվանդանում: Հինգ տարեկանից մեծ առողջ յերեխաների համար կապուլյոս հազը այնպես վտանգավոր չէ, ինչպես փոքրերի, մանավանդ ծծկեր յերեխաների համար: Բացի բժշկի ոգնութիւնից, հիվանդ յերեխան մաքուր ոդի կարիք ունի: Յուրտ ժամանակ պետք է աշխատել, վոր յերեխան դուրսը շատ լինի, և սենյակի ոդը շուտ շուտ փոխվի (լայն բաց անել պատուհանը—այդ ժամանակ հիվանդին կարելի յե լավ ծածկել): Իսկ սաք յեղանակին հիվանդը ամբողջ օրը դուրսը պիտի լինի:

Կապուլյոս հազով հիվանդացած յերեխային կարելի յե դպրոց թողնել, յերբ վոր ցնցողական հազը կվերջանա:

Մանկական հիվանդութիւններից կարմուկը, սկարլա-սինան, դիֆտերիսը յեվ կապուլյոս հազը ավելանալու գավոր հիվանդութիւններն են:

Այդ հիվանդութիւններով տառապող հիվանդ յերեխան իր շուրջը տաքածում է վարակիչ

ախտը: Վորպես զի ուրիշ յերեխաներ նրանցից չվարակվեն, պետք է հետևյալը անել:

1) Հիվանդ յերեխային իսկույն յեկյեր պեժ է հեռացնել առողջներից: Այդպիսի դեպքերում ամենից լավը հիվանդանոց ուղարկելն է:

2) Յեթե տանը վարակիչ հիվանդ է յեղել, քանի վոր ախտահանությունն չէ արած, վոչ վորքի ներս թողնել չի կարելի: Վարակիչ մանրէները ընալինջ անելու համար շատ միջոցներ կան: Ամենից հեշտն է բարձրաստիճան տաքությունով նրանց սպանել: Եժանագին, անպետք իրերը, վորոնց վրա վարակիչ ախտն ընկել է, ամենից լավն է, այրել: Մետաղե իրեղեններին կարելի յե կրակի բոց տալ: Իրեղենների մեջ վարակիչ ախտը լավ է վոջնչանում սաք գոլորշուց: Իրա համար առանձին մեքենաներ կան: Սպիտակեղենի, ինչպես և լվացվող իրերի վարակիչ ախտը կարելի յե վոջնչացնել՝ կես կամ մի ժամ յեփ տալով ջրի մեջ, ուր պետք է սողա գցել: Մահճակալները, հատակը, պատերը կարելի յե ախտահան անել կարբոլաթթվի հինգ տոկոսային խառնուրդով կամ լիգոլով լվանալով: Հիվանդի սենյակում վարակիչ ախտը վոջնչացնելու համար գործ են ածում ֆորմալին կամ ծծմբային գազ, վոր ստացվում է ծծումբ այրելուց: Սակայն այդ միայն մասնագետը կարող է

անել, վորին այդ նպատակով ուղարկում է բժշկական վարչությունը:

Այդպիսի տանից վոչ վորք չպիտի գնա հարեվանների մոտ, վորպեսզի վարակիչ ախտը չտանի այնտեղ:

3) Յերեխաներին պետք չէ դպրոց ուղարկել, յերբ տանը վարակիչ հիվանդ կա: Թեպետ յերեխաները դեռևս առողջ են, բայց նրանք միշտ կարող են իրենց վրա վարակիչ ախտը դպրոց տանել և նրանով բոլոր յերեխաներին վարակել:

4) Վարակիչ հիվանդությունից առողջացած յերեխային, նախ քան դպրոց ուղարկելը, բժշկի հետ խորհրդակցիր:

5) Վերջնականապես ապաքինվելուց հետո ել միառժամանակ վարակիչ ախտը մնում է յերեխայի մեջ:

Յերեխաներին մի համբուրիր, մանավանդ շրթունքները: Համբուրելով՝ հեշտ կարելի յե վարակիչ հիվանդությունը մյուսին տալ:

6) Վորքան շուտ է հաջողվում պարզել յերեխայի հիվանդությունը, այնքան ել շուտ կարելի յե նրան ոգնություն հասցնել: Մենք արդեն զիտենք, վոր մի քանի հիվանդությունների (որինակ՝ դիֆտերիտի) ժամանակ ամեն մի ժամը թանկ է, և յերբեմն դրանից է կախված յերեխայի կյանքը:

Ահա թե ինչո՞ւ յերեխայի հիփանդոքյան անեն մի դեպքում պե՛տ է անհասարկ բժշկին դիմել:

Ծ ա ղ Ի կ .

Ձկա մի ուրիշ հիվանդութիւնն, վորի դեմ մենք կարողանանք այնպէս հեշտ մաքառել, ինչպէս ծաղիկն է: Բայց և այնպէս մեր գոյուղերում ծաղկով դեռ ևս շատ մարդիկ են այլանդակվում մինչև որս ել: Յե՛վ նրանից անագին թվով մարդիկ են մեռնում:

Ծաղկի վարակիչ ախտը գլխավորապէս գրանվում է թեփի թարախի մեջ: Հիվանդին շրջապատող իրերի վրա ընկնելով, վարակիչ ախտը յերկար է պահպանվում: Մարդ կամ անմիջապէս հիվանդից է վարակվում, կամ այն վարակվածներէից, վորոնք այդպիսի հիվանդի մոտ են յեղել: Ծաղկով հիվանդացած մարդը սկզբում սաստիկ տաքացնում է, գլուխը, մեջքը ցավում է: Յերբորդ-չորբորդ որը մարմինը բշտիկներ է դուրս տալիս, վորոնցից շուտով թարախ է հոսում: Տասն և յերեքերորդ որը թեփը չորանում է, կեղևը յերեք-չորս շաբաթում թափվում: Վորպեսզի մարդ ծաղկով չհիվանդանա, նրան նախապահպանող սրկումն են անում ծաղկի վարակիչ ախտի դեմ: Ներսրսկումն անելու հա-

մար վարակիչ ախտը այսպէս է ստացվում. հորթերին ծաղիկ են պատվաստում, իսկ նրա փորի վրա դուրս յեկած ուռույցքների հեղուկը պատվաստում են մարդկանց: Ծաղկի պատվաստը մի մարդուց մյուսին կարելի յեր անել: Սակայն դա շատ վտանգավոր է, վորովհետև ծաղկի պատվաստի հետ միասին առողջ մարդուն կարելի յե սիֆիլիս և ուրիշ հիվանդութիւններ պատվաստել:

Յերբ մարդուն «ծաղիկ» են պատվաստում, նրա կազմվածքի մեջ մի փոքրիկ քանակութիւն ծաղկի թուլնից է մտնում, վոր նրա մեջ ամենաթեթև կերպով ծաղկի հիվանդութիւնն է առաջ բերում: Դրանով մարդ յերկար ժամանակ պաշտպանվում է բնական ծաղկի ծանր հիվանդութիւնից:

Յերեխային առաջին անգամ ծաղիկը 4—6 ամսական ժամանակ պետք է պատվաստել, ամենից լա՛վն է յեղանակի հով ժամանակը—ձմեռը կամ թե գարնան սկզբին:

Ծաղկի մի պատվաստը ամբողջ կյանքի համար չէ, այլ վեցից—յոթ տարի յե պահպանում: Այդ պատճառով ծաղկի պատվաստումը վեց—յոթը տարուց հետո պետք է կրկնել: Իսկ յերբ բնական ծաղկի դեպքեր են լինում, պատվաստումները ավելի շուտ շուտ պետք է անել: Այն

մարդը, վոր մի անգամ բնական ծաղկով հիվանդացել է, ել յերբեք չի հիվանդանալ:

Բ ծ ա վ ո Ր Տ Ի Ֆ: Վ Ե Ր Ա Պ Ա Ր Ա Տ Ի Ֆ:

Վերջին տարիներս Ռուսաստանում միլիոնավոր մարդիկ մեռան բժավոր և վերադարձ տիֆից: Հիվանդանում էյին թե քաղաքներում և թե գյուղերում: Այնպիսի մեծ գյուղեր և գյուղաքաղաքներ էյին պատահում, ուր յուրաքանչյուր խրճիթում ամենքը հիվանդ էյին, չկար մեկը, վոր նրանց խնամեր, անասունը կերակրեր կամ մի վորևէ բան աներ:

Բժավոր Տիֆի վարակից ախտը հիվանդից առողջին է անցնում և մնում հիվանդի մոտ յեղած իրերի վրա: Ներկայումս արդեն հայտնի է, վոր բժավոր տիֆի վարակիչ ախտը հիվանդի արյան մեջ է: Հիվանդից այդ վարակիչ ախտը, հագուստի վոջիլների միջոցով, առողջին է անցնում: Հիվանդի արյունը ծծելուց հետո, վոջիլները առողջ մարդկանց վրա են գնում և կծելով՝ վարակում նրանց:

Հիվանդությունը գլխացավով և տաքությունով (Չերմ) է սկսվում: Հինգերորդ—վեցերորդ օրը հիվանդի մարմնի վրա բծեր, բշտիկներ են յերեվում: Հիվանդը անհանգիստ է, գլուխը սաստիկ

ցավում է, թուլություն է զգում: Յերկու շաբաթից հետո, յերբեմն փոքր ինչ շուտ, իսկ յերբեմն ել՝ ուշ, հիվանդությունը սկսվելուց հետո, տաքությունը սկսում է իջնել, և հիվանդը լավանում է: Բժավոր տիֆից մարդ յերբեմն ծանրը հետևավքներ է ունենում—թոքերի բորբոքում և վերջավորությունների (ձեռների, վոտների) անզգայություն:

Մարդը իր կյանքում բժավոր տիֆով մի անգամ է հիվանդանում:

Վերադարձ Տիֆը հիվանդի արյան մեջ յեղած մանրէներից է առաջ գալիս: Ինչպես բժավոր տիֆի վարակիչ ախտը, այնպես ել վերադարձ տիֆի վարակիչ ախտը՝ վոջիլներից, նույնպես և մլակներից է անցնում: Հիվանդությունը մի անգամից սաստիկ տաքությունով է սկսվում: Ցավում է մեջքը, վոտները: 6—7 օրից հետո տաքությունը միանգամից ընկնում է: Մի շաբաթից հետո տաքությունը նորից սկսվում է (հիվանդությունը նորոգվում է): Այսպես, հիվանդի տաքությունը չորս, յերբեմն և հինգ անգամ կարող է վրա տալ:

Իրեն և շրջապատողներին բժավոր և վերադարձ տիֆերից պահպանելու համար, այդ վարակիչ հիվանդությունը տարածողներին՝ վոջիլներին և մլակներին պետք է վոջնչացնել: Հիվանդին

հիվանդանոց պետք է ուղարկել, վորպես զի նա վարակիչ ախտը չտարածի, իսկ յեթե այդ անկարելի յե, նրան պետք է հեռացնել առողջներէից, մագերը խուզել և լավ լողացնել: Վոջլոտ, կեդատոտ շորերը վառարանում տաքացնել կամ թե մի ամբողջ որ ծծմբի ծխի մեջ պահել: Կեդատոտ շորը ջրի կամ թե մոխրաջրի (շչեոլոկ) մեջ յեփ տալ: Բոլոր շրջապատողներն ել վոջիքներէից պիտի ազատվեն: Չպետք է հիվանդի անկողնի վրա նստել կամ նրա շորերէից ոգտվել: Մի անգամ ընդմիջտ մարդ իրեն համար կանոն պիտի դնի մաքրություն պահպանել (մարմնի, հագուստի և ընակարանի): Ամենորյա մաքրության շնորհիվ միայն մենք կկարողանանք վարակիչ հիվանդություններէից ազատվել:

Արյունախառն փորլուծություն (լիզեցեստիլա):

Սրա վարակիչ ախտը մարդու մարմնի մեջ բերանից է մտնում—անմաքուր ձեռներէից, վարակիչ ջրից կամ ուտելիքներէից: Այս հիվանդության վարակիչ ախտը զանվում է բացառապես մարդու աղիքներում: Այնտեղից արտաթորության հետ միասին նա դուրս է գալիս: Սա—տանջող հիվանդություն է: Որվա ընթացքում հիվանդը վաթսուն անգամ է դուրս գնում: Արտաթորելու ժամանակ հիվանդի քամակի անց-

քում սաստիկ ցավ է լինում, կղկղանքում լորձոնքի պես շատ հյուսթ է լինում և արյուն: Հիվանդի փորում հաճախ շատ ցավեր են լինում: Հիվանդությունը մոտավորապես յերեք շաբաթ է տևում, իսկ յերբեմն—ավելի:

Վորովայնի սիֆ:

Վորովայնի տիֆի պատճառը վարակիչ մանրեններն են, վորոնք բերանից մարդու մարմնի մեջ են մտնում: Վարակիչ ախտը հիվանդի արյան և աղիքների մեջ է լինում և այնտեղից դուրս է գալիս արտաթորության ու շեռի հետ միասին:

Վորովայնի տիֆով հիվանդանալը ջրից կամ ուտելիքից (բանջարեղեն, մրգեղեն, կաթ) է լինում: Վորովայնի տիֆով մարդ միանգամից չի հիվանդանում: Հիվանդության առաջին շաբաթը նա գլխացավ է զգում: Նրա ախորժակը վատ է, թեթև տաքություն ունի: Յերկրորդ շաբաթից տաքությունը սաստկանում է: Հիվանդի փորը սկսում է լուծել, փորը ցավում է:

Հիվանդությունը սովորաբար մոտավորապես չորս շաբաթ է տևում:

Խ ո լ եր ա:

Խոլերայի վարակիչ ախտը գլխավորապես հիվանդի խոլերային արտավիժությունների մեջ

ե լինում (կղկղանքը, փսխունքը): Մանրենները դուրս գալով, կարող են ընկնել ջրի մեջ և ուտելեղենների վրա, ուր նրանք լավ են սպրում և արագ աճում ու բազմանում: Հիվանդի արտաթորությունների վրա նստած ճանձերը վարակիչ ախտը ուտելիքների վրա յեն տեղափոխում: Խոլերայով կարելի յե վարակվել միայն բերանից՝ վարակված կերակրից կամ ջրից կամ կեղտոտված ձեռներից: Խոլերայի վարակիչ ախտը բերանից ստամոքսի մեջ ե ընկնում, և ապա — աղիքների մեջ:

Այստեղ, աղիքներում, նա սկսում ե բազմանալ և իր թուլյաներով մարդու թունավորել: Առողջ մարդու ստամոքսը աղաթթու ե գոյացնում, վոր և սպանում ե խոլերայի վարակիչ ախտը: Միայն այն ժամանակ, յերբ ստամոքսը վատ ե գործում, խոլերայի վարակիչ ախտն ազատ ե մտնում աղիքներն և հիվանդություն առաջ բերում: Այդ պատճառով մարդիկ անոթի ժամանակ ավելի շուտ են վարակվում, քան թե կերակուր ընդունելուց հետո: Այդ պատճառով խոլերայի ժամանակ չպետք ե տանից քաղցած դուրս գալ: Խոլերայով վարակվածը յերկրորդ օրը, իսկ յերբեմն և առաջին իսկ օրը հիվանդանում ե: Մարդ սկսում ե փսխել, փորը լուծում ե, ցնցումներ են լինում (ձեռքերն ու վոտները

կծկվում են): Այդպես մի կամ յերկու օր ե աւում, և հիվանդը կամ մեռնում ե, կամ թե սկսում ե առողջանալ, և մի կամ յերկու շաբաթից հետո նա արդեն առողջ ե:

Այժմ դուք արդեն գիտեք, վոր արյունախառն փորլուծության, վորովայնի աիֆի և խուլերայի վարակիչ ախտերը աղիքներում են լինում (այդ հիվանդությունները աղիքների հիվանդություն են կոչվում): Այնտեղից նրանք դուրս են գալիս արտաթորության հետ (խոլերայով հիվանդինը՝ նաև փսխածի հետ): Ուստի այդ հիվանդությունների հետ կուվելու ամենագլխավոր միջոցն ե այդ հիվանդներից դուրս յեկած աղտեղությունների մեջ վարակիչ ախտը վոչնչացնել: Ուշադրություն պետք ե դարձնել, վոր այդ կեղտոտությունները ցրի մեջ յնկնեն յեղ նրան վարակեն:

Այդ հիվանդությունների վարակիչ ախտը տարածում են ճանձերը: Այդ հիվանդությունների դեմ պայքարելու գործում ճանձերի դեմ կռվելը շատ կարևոր միջոց ե: Միշտ աշխատեցեք շուտ արտը տանել ձեր աղբը և հերկել, այն ժամանակ ճանձերը բասմանալու համար տեղ չեն ունենալ (ճանձերը աղբի մեջ են ածում իրենց ձվերը):

Ամեն մարդ յերբեք չպետք ե մոռանա հե-

տեյալը, մանավանդ յերբ իր շրջակայքում աղիք-
ների տարափոխիկ հիվանդություններ են յե-
րևում (արյունախառն փորլուծություն, վորա-
վայնի տիֆ և խոլերա):

1. Վարակիչ ախտը հիվանդի արտալիժու-
րյունների մեջ և (կղկղակ, շեռ, փսխում):

Վարակիչ ախտը կարող և ջրի, կերակրի մեջ
ընկնել, հացի, բանջարեղենների և՛ ձեռքերի
վրա: Այդ պատճառով անհրաժեշտ և միայն յերի
սփած ցոր խմել, կերակուրը յերի հացը ձանձերից
պահել: Բանջարեղենը և մրգերը ուտելուց ա-
ռաջ յնուման ցրով քրջել: Ձեռները շոտ շոտ
քիսնալ, մանուկանոք ուտելուց առաջ, արտալիժու-
ների մաքրոքյանը հետեւել, իսկ ինչեղ յիսն,
անպատճառ շիկնել յերի վերջապետ ստամոքսի յերի
աղիխների հիվանդոքյան ժամանակ իսկույն
բժշկին դիմել: Մի մոռանաք, վոր հիվանդու-
թյան սկզբում միշտ ավելի հեշտ և հիվանդին
ոգնել:

Ի՞նչ պէտք և անել, յերբ անը վարակիչ հի-
վանդ և լինում:

Մենք արդեն գիտենք, վոր վարակիչ ախտի
գլխավոր աղբյուրն ինքը վարակիչ հիվանդն և
հանդիսանում: Վարակիչ ախտը նրանց չորս
կողմն և տարածվում:

Անս քե ինչու վարակիչ հիվանդոքյունով հի-
վանդացածին հիվանդանոց պէտք և անել: Այդ-
պիսի հիվանդին յերբեք հարկավոր չե տանը պա-
հել: Հիվանդանոց տանելով (ուր նրան խնամելու
համար հատուկ մարդիկ կան) դուք հիվանդի հա-
մար բարի գործ եք անում, շրջապատողներին ել
վարակվելուց պահպանում: Տանը հիվանդին վոչ
միայն բժշկել, այլ և խնամել անգամ չեն կարող:
Իսկ հիվանդանոցում կան խնամողներ, և բժիշկն
ել որը 2 — 3 անգամ կնայի այդպիսի հիվանդին ու
ժամանակին կարող և նկատել նրա մեջ յեղած
փոփոխությունը: Բայց յեթե վորեւ պատճառով
վարակիչ հիվանդին վոչ մի կերպ չի կարելի հի-
վանդանոց տանել և նա տանն և մնում, այն ժա-
մանակ պետք և հետեյալը հիշել. նախ և առաջ
վարակիչ հիվանդին անհապաղ մի առանձին սեն-
յակում պետք և դնել, իսկ ավելի լավ, յեթե կա-
րելի լինի առանձնացած կացարանում նրան տե-
ղավորել: Հիվանդանոցներում ել վարակիչ հի-
վանդներին առանձին են պահում, վոր ուրիշնե-
րին չվարակեն: Բժիշկները, ոգնականները, քույ-
րերը և դայակները, յերբ վարակիչ հիվանդնե-
րին խնամում են, իրենց շորի վրա խալաթ են
հագնում: Հենց վոր հիվանդանոցից դուրս են
գալիս, այդ խալաթը իսկույն հանում են: Հի-
վանդանոցում վարակիչ հիվանդները բոլոր ար-

տավիժուհները (կղկղանքի, շեռի, փսխածի, բլղամի) վրա աջնպիսի բաներ են թափում, վոր վարակիչ ախտը սպանում են (կարբոլաթթու, սուլեմա, կրի կաթ)։ Յերբ վոր վարակիչ հիվանդին տանն յես թողնում, այդ բոլորը միտդ պիտի պահես։ Այն սենյակում, ուր հիվանդն ե պառկած, պետք ե ամեն բան հավաքել՝ ինչ վոր նրան հարկավոր չե, և նրա համար առանձին ամաններ պետք ե հատկացնել (ափսե, պնակ, թաս)։ Այդ ամանները չպետք ե խառնել մյուս ամանների հետ, հարկավոր ե առանձին պահել։ Նույնպես առանձին պետք ե պահել և լվանալ հիվանդի անկողնի շորերը և սպիտակեղենը։ Լվանալուց առաջ այդ շորերը պետք ե մոխրաջրի մեջ յեփ տալ։ Դրանով վարակիչ ախտը շատ շուտ կոտորվում ե։ Հիվանդի համար առանձին դուշ (վեղրո) պետք ե պահել, իսկ արտաթորությունները (կղկղանք) և շեռը անմիջապես ախտահանել։ Դրա համար դուշի մեջ կրի կաթ են ածում, կամ թե արտաթորությունները վրա չմաքրած կարբոլաթթու յեն թափում կամ մոխրախառն կուպր։ Մանավանդ այդ պետք ե հիշել, յերբ տանը վորովայնի տիֆով, արյունախառն փորլուծությամբ կամ խոլերայով հիվանդ կա։ Ախտահանության յենթարկված արտաթորությունները կացարանից հեռու տեղ պետք ե թա-

փել, նաև այն տեղից, վորտեղից խմելու համար ջուր են վերցնում։ Այդ նպատակի համար ավելի լավ ե մի հոր փորել, մեջը արտաթորությունները թափել և հողով կամ մոխիրով ծածկել։ Հարկավոր չե, վոր հիվանդին ամենքը խնամեն, ավելի լավ ե վոր տանեցիներից մեկին հանձնվի այդ գործը։ Հիվանդին խնամողը ինքը առողջների մոտ պիտի չգնա, իսկ յեթե այդ անկարելի յե, այն ժամանակ գոնե հիվանդի սենյակից դուրս գալուց առաջ բոլոր շորերը պիտի հանի և ուրիշ մաքուր շոր հագնի։ Վորպեսզի խնամողն ինքը չհիվանդանա, ամեն անգամ, հիվանդին մոտենալուց հետո, ձեռքերը տաք ջրով և սապնով լավ պիտի լվանա։ Վարակիչ հիվանդի մոտ բժշկին շուտ շուտ պետք ե կանչել և միշտ ճշտությամբ կատարել այն բոլորը, ինչ վոր նա նրան կնշանակի։ Միայն բժիշկը կարող ե հարկավոր դեղը նշանակել և ցույց տալ, թե ինչով կարելի յե հիվանդին կերակրել, վոր նա չվնասվի։ Յերբ վարակիչ հիվանդը արդեն լավացել ե և ուրիշների համար նա այլ ևս վարակիչ չե, նրան հարկավոր ե լավ լողացնել և մաքուր սպիտակեղեն ու հագուստ հագցնել. միայն այդ ժամանակ կարելի յե նրան ընդհանուր բնակարանը և ընտանիքի մյուս անդամների մոտ թողնել։ Բայց այն սենյակում, ուր հիվանդն եր պառկած, և նրա

իրերի վրա դեռ ևս վարակիչ ախտ կա: Այդ ախտը վոչնչացնելու համար հարկավոր է սենյակը (պատերը, հատակը, առաստաղը) թունդ մոխրաջրով լվանալ և ապա մի քանի որ շարունակ պատուհաններն և դռները բանալ և ողբ փոխել: Դրանից վարակիչ ախտն այնտեղ կորչում է: Կամ թե՛ սենյակը կարելի յե կրի կաթով (կրով) սպիտակացնել, այդ էլ շատ լավ է վոչնչացնում վարակիչ ախտը: Այդ սենյակի նստարանները և սեղանները նույնպես պետք է մոխրաջրով լվանալ: Հիվանդի սպիտակեղենը և շորերը նույնպես պետք է թունդ մոխրաջրում յեփ տալ: Մուշտակը և ուրիշ բաները, որ չի կարելի յեփ տալ, մի քանի որ արևի տակ պետք է փռել: Այն ամանները, վորից հիվանդն ուտում էր և խմում, նույնպես պետք է ջրի մեջ յեփ տալ: Բոլոր ասածներիցս այժմ պարզ պիտի լինի, թե վարակիչ հիվանդը վորքան նեղութուն, անհանգստութուն և ուշադրութուն է պահանջում, յերբ նրան տանն են թողնում: Արդյոք տանը հաջողվում է այս բոլորը կատարել: Իհարկե՞ վոչ: Հո մեր գյուղացու խրճիթը այնքան փոքր է և նեղ, վոր հիվանդին վոչ միայն առանձին սենյակ չի հաջողվում հատկացնել (իսկ նրա համար առանձին կացարանի մասին խոսելն անգամ ավելորդ է), այլ և նրա համար մի ազատ ան-

կյուն էլ չի գտնվի: Իսկ յեթե վարակիչ հիվանդը տանը թողնվելով վատ պիտի խնամուի, դրանից լավ բան սպասել արդեն չի կարելի: Հենց վոր մի բան աչքից բաց թողնես, վարակիչ ախտը վոչ միայն ընտանիքի մյուս անդամներին կփոխվի, այլ և հարևաններին, և շատ արագ կարող է ամբողջ գյուղում տարածվել: Մի անգամ ընդ միշտ յիշիր ուրեմն՝ վարակից հիվանդին յերբեք սանը չրողնեք, այլ շուտով հիվանդանոց տարեք: Յեթե վարակիչ հիվանդին հիվանդանոց եք տանում, պահանջեցեք, վոր այնտեղից մարդ ուղարկեն հիվանդից հետո ձեր տանը մնացած վարակիչ ախտը վոչնչացնելու (ախտահանութուն):

Թե ինչպես մարդ կարող է իրեն պահպանել վարակիչ հիվանդութուններից:

Ահա ընտանիքից մեկն ու մեկը հիվանդացել է: Մինչև վոր կվորոշվի նրա հիվանդութունը, մի քանի որ է անցնում: Բայց յեթե հանկարծ նա վարակի՞չ է: Այդ ժամանակի ընթացքում նա կկարողանա վարակիչ ախտը իր շուրջը տարածել: Հենց հիվանդի համար էլ լավ կլինի, յեթե, վորքան հնարավոր է, շուտ պարզվի, թե ինչ է նրա հիվանդութունը: Այդ պահանջով ավելև մի

հիմնադրոյցան դեպքում հարկաւոր ե, վոր հի-
վանդոյ բժիշկ կանչի իմանալու, թե ինչ հիվան-
դութիւնն ունի: Հիվանդի հիվանդութիւնը վա-
րակէ՞ն կլինի, թե՞ վոչ — բայց միշտ ամեն մի
հիվանդութեան ժամանակ վարակիչ ախտը պետք
ե յիշել: Չե վոր կարելի ե վարակիչ ախտը ամե-
նեին տուն ներս չթողնել: Ինչպէս պետք ե այդ
անել: Մենք արդեն գիտենք, վոր վարակվել
կարելի յե հիվանդից: Այդ պահանջով այն տունը,
որ վարակիչ հիվանդ կա, պետք ե միայն ծայրահեղ
անհրաժեշտութեան դեպքում մտնել, իսկ տունը
մտնելուց հետո, ուր վարակիչ ախտ կա, լվացվել
և շորերը փոխել:

Վարակիչ ախտից շատ ե լինում թողի մեջ:
Մի փոքրիկ թողի մեջ միլլիոնավոր մանրէներ են
լինում: Թողից մենք թոքախտով ենք վարակվում,
թողի միջոցով յերեխաները կարող են սկարլա-
տինայով, դիֆտերիտով, կապույտ հագով հիվան-
դանալ: Ոչնչացրե՛ք թողը: Թողը շորով արեցե՛ք,
բայց վոչ ավերով ողի մեջ բարձրացրե՛ք:

Աղիքների համատարած հիվանդութեան ժա-
մանակ (արյունախառն փորլուծութիւն, վորո-
վայնի աիֆ, մանուկների փորլուծութիւնը ա-
մառ ժամանակ) այդ վարակիչ ախտը կարող են
ճանճերը բերել վոչ միայն այդպիսի հիվանդից,
այլ և կեղտից, տականքներից, ուր այդ վարա-

կիչ ախտը շատ լավ ե ապրում և շատ արագ
բազմանում: Վարակիչ ախտը ճանճերը բանջա-
րեղենի, մրգերի վրա յեն տեղափոխում, վարա-
կում ջուրը: Վարակված ձեռներով դուք կարող
եք կերակրի հետ վարակիչ ախտը կուլ տալ:

Վեղճոս ցրի հորերը մոխիր քափեցե՛ք, կուպր
քափեցե՛ք — բաց մի՛ քողե՛ք: Վորպես զի ինքդ
քեզ չվարակես, ճաշելուց առաջ սապոնով ձեռ-
քերդ լվա: Յերբ վոր աղիքներիդ մեջ հիվանդու-
թիւնն ե յերևում, հում բանջար և մրգեր մի
ուտի: Հում ջուր մի խմիլ, այլ միշտ յեփ
տվածը գործ ածիր:

Վարակիչ հիվանդութեանների վսակաւոր սա-
րածողների դեմ կոյեցե՛ք — ճանճերի, մլակների,
լվերի և վոջիւնների դեմ:

Ճանճերը վոջնչացնելու համար զանազան մի-
ջոցներ կան: Ճանճերն ամենից լավ բազմանում
են հոտած հեղուկների և աղբի մեջ: Աղբը սակից
հեռու թափեցե՛ք: Վրան կամ կուպր լցրե՛ք կամ
կիր ցանեցե՛ք: Աշխատեցե՛ք աղբի կույտերը շուտ
դուրս տանել: Վորպես զի ճանճերը տուն ներս
չմտնեն, պահանջներից քանձիփ կա՛մ ցանց
կախեցե՛ք:

Բաղլինջների դեմ ամենալավ միջոցը պաղլեղի
(շիբի) տաք խառնուրդն ե (յերեք բաժակ յեռ-
ման ջրի համար կես բաժակ շիբ վերցնել):

Այդ հեղուկով պետք է թրջել բաղլինջների բունը, իսկ յերբ չորանա, բույներին պետք է հյուսնի տաք սոսինձ քսել՝ քացախի հետ խառնած: Լվերը, բաղլինջները և վոջիլները շատ շուտ կորչում են, յեթե խրճիթում ծծումք, ֆորմալին կամ ուրիշ ֆլասակար գազեր են ծխում: Բայց այդ կարող է անել միայն մասնագետը (ախտահանը), վորին բժշկական վարչությունն է ուղարկում:

Վոջիլների և նրանց ձվերի (անիծի) դեմ ամենահաստատ միջոցը չոր տաքությունն է: Վոջիլներ են ունենում անմաքրասեր, կեղտոտ և փնթի մարդիկ: Մարմնի մաքրությանը մարդ միշտ պիտի հետևի (շուտ շուտ բաղնիս գնալ և մազերը խուզել, սպիտակեղենը փոխել՝ գոնե շաբաթը մի անգամ): Վոջիլներով և անիծներով վարակված հագուստը պետք է տաք վառարանի մեջ դնել: Կեղտոտ շորերը լվանալիս անպատճառ հարկավոր է տաք ջրում յեփ տալ, և այն ժամանակ հավաստի կարելի յե լինել, որ ոչ միայն վոջիլները, այլ և բոլոր անիծներն այնտեղ կկորչեն:

Սակեմբ պիսի կովեն վարակիչ հիվանդությունների դեմ:

Ձեղանից յուրաքանչյուրը գիտե, թե վարակիչ հիվանդը ընտանիքին վորքան անհանգստություն և անախորժություն է պատճառում: Լավ է, յեթե միայն մի հիվանդ է: Յերբեմն վարակիչ ախտը յերկար է մնում, մինչև վոր ընտանիքում ամենքին կվարակի: Ձեզ համար այժմ պարզ է, վոր շատ անգամ կարելի յե խուսափել վարակիչ հիվանդություններից: Իրա համար հարկավոր է միայն կանոնավոր կերպով կարգավորել կյանքը, իմանալ, թե վարակիչ ախտը ինչ տեղից է ստացվում, և թե վորպիսի միջոցներով կարելի յե նրա դեմ մաքառել: Մարդ վորքան էլ ճշտությամբ կատարելու լինի վարակիչ հիվանդությունների դեմ մաքառելու կանոնները, չի կարող այդ չարիքին հաղթել: Միայն այն ժամանակ կարելի յե հաղթել վարակիչ ախտին, յերբ այդ ընդհանուր վտանգի դեմ ամենքը միասին, ամբողջ համայնքով կկովեն: Յերևակայեցեք, վոր դուք ամեն բան արել եք՝ վարակիչ ախտը ձեզ մոտ չթողնելու համար: Ձեր խրճիթում ամեն տեղ մաքրություն է, ճանճեր չկան, բակը մաքուր է, մի խոսքով՝ ամեն ինչ կարգին է, կարծես թե վարակվելու համար վոչ մի առիթ

չկա: Բայց անա ձեր դրացին արյունախառն փոր-
լուծութեամբ հիվանդացավ: Այդ վարակիչ ախտի
վտանգի մասին այնտեղ վոչ վոք չի մտածում:
Ամենքը գնում են այնտեղ հիվանդին այցելելու,
և նրան հիվանդանոց ել չեն ուղարկում: Հարեանք
մինչև անգամ արտաքնոց ել չունի (իկնչպես մեր
գյուղացիների մեծ մասը), և այդ հիվանդի
արտաթորութեանները բազմապէս տանում և, ինչ
տեղ պատահի, թափում: Իսկ ճանձերը միշտ
պատրաստ են—ուտում են այդ վարակիչ ախտը:
Այդ ճանձերից մեկը ձեր բազմապէս և թուր և պա-
տահաբար, ձեր ճաշի ժամանակ, ձեր ափսեհն ե
ընկել: Դուք նրան չեք նկատել և շարունակում
եք ձեր ճաշը: Իսկ հետո մեկ ել տեսաք, դուք
ել արյունախառն փորլուծութեամբ հիվանդացաք:
Հազարավոր այդպիսի որինակներ կարելի յե այս-
տեղ առաջ բերել: Բայց առանց դրան ել, թվում
ե ինձ, ամենքիդ համար արդեն պարզ ե,
վոր միայն ընդհանուր միջոցներով, ընդհանուր
ճիգերով հնարավոր կլինի վարակիչ ախտը վոչն-
չացնել:

Դուք հիշում եք, վոր վարակիչ մանրէները
լավ են ապրում և բազմանում այնտեղ, ուր
կեղտոտ ե, ուր մարդիկ նեղված են ապ-
րում, ուր բակերը, արտաքնոցները կեղտոտ
են պահվում, ուր շատ ճանձ և ուրիշ միջատ-

ներ կան: Վարակիչ հիվանդութեանները դեմ
կուրծն աղտեղութեանն ու կեղտը ոչնչացնելով
պետք ե սկսել—այնպես պետք ե անել, վոր բո-
լորի խրճիթները, բակերը մաքուր լինեն, ջուրը
մաքուր լինի, արտաքնոցները մաքուր լինեն:
Իսկ յեթե մեկը չքավորութեան պատճառով այդ
անել չի կարող, այդ գործում ել համայնքը նրան
պետք ե ոգնի: Դրանով դուք միայն փրկում եք
ձեզ վարակիչ հիվանդութեաններից, վոր միշտ
կարող են ձեր բակը անցնել, յեթե ձեր անհաս-
կացող հարեանք շարունակի կեղտի մեջ ապրել:

Հարկավոր ե հետևել, վոր ջրհորները, լճերն
և գետերը չկեղտոտվեն:

Ճանձերի, բաղնիքների, մշակների, ընկերի յե
վոցիկների դեմ յարջ կոխի պե՛տք ե մղել, վորոնք
իրենց հետ վտանգավոր վարակիչ հիվանդութեան-
ներ շատ են տարածում:

Առանձին ուշադրութեան պետք ե դարձնել
յերեսխանների վարակիչ հիվանդութեանների դեմ
կուրծն վրա: Հարկավոր ե յերեսխանների առող-
ջութեանը ամբողջով (կանոնավոր կերակրել,
մաքուր պահել և հնարավորութեան տալ, վոր
ամառն ու ձմեռը, վորքան կարելի յե, թարմ
ողում շատ լինեն): Դրանով մենք ոգնած կլի-
նենք մանկական կազմվածքին շրջապատող վա-
րակիչ ախտի դեմ կուրծն:

Յերբ յերեխան վարակիչ ցավով հիվանդանում ե, յերբեք պետք չե այդ ծածկել: Յերեխային հարկավոր ե անհապաղ հիվանդանոց ուղարկել: Այդ բանը շուտով հաղորդել ե հարկավոր հարե-վաններին, վոր այդ տունը ոչ վոք չգա և այդ տեղից ոչինչ չվերցնեն:

Այդպիսի տանից, քանի վոր բժիշկը ախտահանությունը չե արել, ախտը չի վոչնչացել, վոչ վոք վոչ մի տեղ պիտի չգնա: Մանավանդ դըպրոցը պետք ե պահպանել, վոր վարակիչ ախտը այնտեղ չնկնի: Վարակիչ հիվանդություններով հիվանդացած յերեխաներին առանց բժշկի թույլտվության դըպրոց ուղարկել չի կարելի: Պետք ե յիշել, վոր այդ հիվանդ յերեխայից վարակիչ ախտը վոչ միայն դըպրոցի աշակերտներին կարող ե անցնել, այլ և ձեր գյուղի բոլոր յերեխաներին:

Յերբ մենք խոսում յենք վարակիչ հիվանդությունների դեմ կովելու մասին, մենք պարզ ներկայացնում յենք, վոր այդ գործում նախաձեռնողի, առաջնորդի գլխավոր դերը բժշկին պիտի պատկանի: Բայց ձեր բժիշկը կարող ե գլուխ բերել այդ գործը, յերբ վոր նրա շըջանի բոլոր բնակիչները նրան կոգնեն:

Դուք ամենքդ արդեն գիտեք, թե վորքան կարևոր ե վարակիչ հիվանդին առողջներից բաժանելը: Սակայն այդ դուք կարող եք անել,

յեթե ձեր հիվանդանոցը բարվոք վաճակի մեջ ե:

Վարակիչ հիվանդությունների դեմ կովելու համար բժշկին մեծ ոգուտ կարող են տալ առողջապահական հանձնաժողովները: Ռուսաստանի գրեթե բոլոր մեծ գյուղերում ներկայումս այդպիսի հանձնաժողովներ արդեն կան: Իսկ այդ հանձնաժողովի գործը շատ կարևոր ե և լուրջ: Ամենից առաջ նա միշտ կապ պիտի պահպանի գավառակային բժշկի հետ, վոր կարող ե նրանց խորհուրդ տալ, թե յուրաքանչյուր առանձին դեպքում ինչ ե հարկավոր անել վարակիչ հիվանդության առաջն առնելու համար:

Ժամանակ առ ժամանակ այդ հանձնաժողովը գրույցներ պիտի ունենա բնակչության հետ՝ վարակիչ հիվանդությունների մասին:

Առողջապահական հանձնաժողովը վոչ միայն հետևում ե, վոր քաղաքացիներն իրենց բակերը, փողոցները մաքուր պահեն, վոր արտաքնոցները մաքրեն, այլ և հսկում ե, վոր բնակիչների բնակարանները մաքուր պահվեն, վոր ջրհորները, լճերն ու գետերը չապականվեն, վոր քաղաքացիները վարակիչ հիվանդներին իրենց աներում չպահեն, այլ հիվանդանոց ուղարկեն: Հենց վոր գյուղում մի կասկածելի հիվանդ ե լինում, հանձնաժողովը պարտավոր ե իսկույն և յեթ գավառակի բժշկին հաղորդել այդ, և, յեթե հար-

կալոր ե, նա առանց հետաձգելու հիվանդին հիվանդանոց ե ուղարկում:

Ահա թե ինչու առողջապահական մասնաժողովի համար հասկացող մարդիկ պետք ե ընտրել: Չե՞ վոր նրանց հմտութունից ե կախված վարակիչ հիվանդութունների՝ մարդու այդ ամենակատարի թշնամիները դեմ հաջող կովելը:

	Էջ
Ի՞նչ ե վարակիչ հիվանդությունը	3
Վարակիչ հիվանդությունների պատճառները	5
Ի՞նչպես եմ վարակիչ հիվանդություններ մեկից մյուսին անցնում	9
Մարդու մարմնի մեջ ընկած մանրէներին ժամանակ ե հարկավոր այնտեղ բազմանալու յեվ ուժեղանալու համար	14
Մարդու կազմվածքը կովում ե վարակիչ ախտի դեմ .	15
Հիվանդությունն անցնելուց հետո վարակիչ ախտը վորքան ժամանակ ե մնում մարդու մարմնի մեջ . .	16
Մանկական վարակիչ հիվանդություններ	17
Կարմրուկ	20
Սկարլաթնա	22
Դիֆտերիս	23
Կապույտ հազ (կոկլյուս)	26
Մանկական հիվանդություններից կարմրուկը, սկարլաթնան, դիֆտերիսը յեվ կապույտ հազը ամենավսանգավոր հիվանդություններն են	27
Ծաղիկ	30
Բժավոր սիֆ: Վերադարձ սիֆ	32
Արյունախառն փորլուծություն (դիզինտերիյա) . . .	34
Վորովայնի սիֆ	35
Խոլերա	35
Ինչ պե՞տ ե անել, յերբ տներ վարակիչ հիվանդ ե լինում	38
Թե ինչպես մարդ կարող ե իրեն պահպանել վարակիչ հիվանդություններից	43
Ամենք պիտի կովեն վարակիչ հիվանդությունների դեմ	47

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

— Հ ա յ կ ա կ ա ն ս ե կ ց ի ա —

Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10.

- Ի. ՍՏԱԼԻՆ . . . Գյուղացիական հարց, գինը 50 կոպ.
- Ի. ՍՏԱԼԻՆ . . . Ազգային հարցը (սպագրվում է)
- Վ. ԼԵՆԻՆ . . . Պատգամներ յերիսասարգության:
գինը 15 կ.
- Ն. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ . . . Լենինի պատգամները ժողովրդական
լուսավորության մասին: Գինը 20 կ.
- Զ. ՅԱՎՈՐՍԿԱՅԱ . . . Կլարա Յեկիև (կենսագրությունը):
Գինը 10 կոպ.
- Ն. ՏՈՒՐՅԱԿՈՒՎՈՎ . . . Ազգային հարցը յեվ դպրոցը:
Գինը 40 կոպ.
- Բ. ԺԱՎՈՐՈՆԿՈՎ . . . Հասարակագիտությունը I աստիճանի
դպրոցում:
- Ա. ԳՄԻՏՐՅԵՎԱ . . . Տգիտությունը յեվ սնահավասությունը:
Գինը 15 կոպ.

- Մ. ԼԻՎԵՆՍԿԻ . . . Գյուղատնտեսական հարկ: Գինը 20 կ.
- ՅԵՍԻՊՈՎ . . . Գյուղացիության պահանջները յեվ
խորհրդային դպրոցի ծրագրերը:
Գինը 12 կոպ.
- Պ ՎԼՍՍՈՎ . . . Հողի մշակումը յերաճի ժամանակ:
Գինը 40 կոպ.
- Լ. ՅՈՉԵՖՈՎԻՉ . . . Գյուղ կանգնի գերան կկոսրի (կոոպե-
րացիան գյուղում): Գինը 30 կոպ.
- Ի. ՊՈԿՅԱՊՈՍԿԻ . . . Աստու կամեր բե՞ գյուղատնտեսական
գիտությունը:

- ԳՈՒԳԼԻՆ . . . Փորոզ փայտից մինչեվ տրակտոր:
(Տպագր.):
 - Ն. ՌՈՒԳԻՆ . . . Գյուղացիական հողատիրաւարության
այբուբենը: (Տպագրվում է):
 - Ա. ԿՐԱՎՉԵՆԿՈ . . . Թե ինչպես կարելի յե գյուղում
էլեկտրականություն անցկացնել:
 - Ա. ՍԿՈՄՈՐՈՅՈՎ . . . Առաջին ոգնությունը հիվանդ կեն-
դանուն:
 - Ա. ԲՐԱՆՍԲՈՒՐԳ . . . Ընտանի կենդանիների վարակիչ հի-
վանդությունները:
 - Ն. ՍԵՄՇԵՆՈ . . . Թոֆաս:
 - Բ. ԳԻՆՍԲՈՒՐԳ . . . Յերեխաների վարակիչ հիվանդու-
թյունները:
 - Վ. ԲՐՈՆՆԵՐ . . . Վեներական պիստ:
 - Ա. ՍՊԵՐԱՆՍԿԻ . . . Մոր այբուբենը:
- — —
- Ն. ՍԵՄԵԿԻՆ . . . Արեվը, նրա վորդիները յեվ բուսները:
(Տպագր.):
 - Ա. ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ . . . Ուղտից մինչեվ այերուպան: (Տպագր.):
 - Վ. ՅԱՉՎԻՅԿԻՅ . . . Մարդկային բնակարանի պատմու-
թյունը:

- Մ. ԳՈՐԿԻՅ . . . Յերիսասարդ գրողը: Մարդը:
 - Ա. ՍԵՐԱՖԻՄՈՎԻՉ . . . Պատմավաճկներ: (Տպագր.):
- — —
- Ղ. ԱՂԱՅԱՆ . . . Մանկական պատմավաճկներ: (Պատկե-
րագր.): (Տպագր.):
 - Գ. ՄՍՄԻՆ -
ՍԻԲԻՐՅԱԿ . . . Մոծակի յեվ արջի մասին: (Պատկե-
րագր.):

5241

- Պ. ՈՐԼՈՎԵՅ . . . Ճամբորդություն այերոպլանով:
(Պատկերագրող):
- Պ. ՈՐԼՈՎԵՅ . . . Քիմիկոս Կուզկան: (Պատկերագրող):
- Ա. ԿՈՒՊՐԻՆ . . . Յերկրի իւրբերում: (Պատկերագրող)
- Ա. ՆԵՎԵՐՈՎ . . . Ինչպես էլին ապրում սիկնիկները
յե՛վ ինչ արեց արեհին գինձորը: (Պատկերագրող): Գինը 16 կոպ.
- Ա. ԿՐՍՎՉԵՆԿՈ . . . Ինչպես Սաֆոն Կարմիր Բանակային
դարձավ: Գինը 35 կոպ.
- Ֆ. ՖՈՔՍ . . . Մինիստր մեկ ժամով: (Պատկերագրող):
- ՅԷ. ՌՍ.ԴԻՆ . . . Պիոներ, պահպանիր առողջությունդ:
- ՌԻԺՈՎ . . . Պատանի պիոներ: (Ժողովածու
(Տպագր.):

Գ ի մ ե լ` Центриздат, Москва, Никольская, 10
կամ Հայաստանի Պետհրատին:

<< Ազգային գրադարան



NL0273614